

ԿԱՅՈՒՆ ԶՈՒԳՈՐԴՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ
«ՏԱՐԻՔ» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏՈՒՄ

ՄԱՐԻԱՄ ԱՂԱՍՅԱՆ

«Լեզվամշակույթ» եզրույթը մեկնաբանվում է որպես արժեքների, ավանդույթների, լեզվական միջոցների և խորհրդանշանների, պատկերների, տեքստերի և անվանումների ամբողջություն: Լեզվամշակութաբանության ուսումնասիրությունները սկսվել են դեռևս XIX դարի վերջից: Լեզվամշակութաբանության՝ որպես առանձին գիտակարգի ուսումնասիրության շրջանակները լայն են. լեզվի և մշակույթի փոխկապակցվածությունը, զարգացման տարբեր միտումները և նկարագրությունները, ինչպես նաև դրանց համաժամանակյա փոխներգործությունը¹: Որպես լեզվամշակութաբանության ուսումնասիրության առարկա առաջարկվում է դիտարկել նաև մարդկային գիտակցության ձևերը, որոնք առկայանում են լեզվական նշանների միջոցով: Այն զբաղվում է «մայրենի/օտար լեզուներ», «բնօրինակ/թարգմանվածք» և մի շարք այլ հակադրությունների ուսումնասիրությամբ: Լեզվամշակութաբանության քննության հիմնական նպատակը լեզվի, ազգային գիտակցության, մշակույթի, իսկ տվյալ հետազոտության շրջանակներում՝ մասնավորապես տարիքային նորմերի լեզվաբանական ուսումնասիրությունն է:

«Տարիք» հասկացությունը կարելի է մեկնաբանել տարբեր տեսանկյուններից, քանի որ այն առնչվում է գիտության տարբեր ճյուղերի և մարդկային գործունեության տարբեր ոլորտների հետ: Դրանով զբաղվում են ոչ միայն ժողովրդագրությունը և լեզվաբանությունը, այլև այնպիսի գիտություններ, ինչպիսիք են սոցիոլոգիան, փիլիսոփայությունը, հոգեբանությունը և այլն: Ըստ «տարիք» հասկացության ամենաընդհանրական մեկնաբանման՝ այն մարդկային բնութագիր է, որն արտահայտվում է կյանքի փուլերով:

Հայտնի է, որ հոգելեզվաբանության մեջ գոյություն ունեն այս կամ այն մշակույթին բնորոշ մտածողության առանձնահատկությունները վեր հանելու տարբեր հնարներ: Լեզվական գիտակցությունը բնութագրվում է զուգորդային/հարացույցային կապերի միջոցով (սեռային, տարիքային, մշակութային և այլն): Միևնույն հասկացության հետ զուգորդային կապերը կարող են տարատեսակ լինել՝ կախված մշակու-

¹ См. у Телия В. Н. Русская фразеология. Семантический, прагматический и лингвокультурологический аспекты. М.: «Языки русской культуры», 1996, էջ 217:

թային առանձնահատկություններից, այնուհանդերձ այդ կապերը բավականին կարծրատիպային են յուրաքանչյուր մշակույթի համար²:

Հիմնվելով այս փաստի վրա՝ սույն հոդվածում կատարվել է «տարիք» իմաստային դաշտի լեզվամշակութային առանձնահատկությունների ուսումնասիրություն հայկական և անգլոամերիկյան մշակույթների տեսակետից: Նշված նպատակին հասնելու համար մշակել ենք հայերեն և անգլերեն առանձին հարցաթերթիկներ՝ ներկայացնելու «տարիք» իմաստ արտահայտող բառերի բացատրությունները ըստ ունեցած առաջնային զուգորդումների: Հայկական մշակույթը կրողներին առաջարկվել է հարցաթերթիկ, որը ներառում է տարիք ցույց տվող 22 բառ՝ *աղջիկ, տղա, չափահաս, անչափահաս, ավագ, երեխա, երիտասարդ, ծեր, կրտսեր, մանուկ, մեծ, փոքր, նորածին, դեռահաս, պատանի, տարեց, միջահասակ, երկարակյաց, տարիք, հասակակից, մեծահասակ, փոքրահասակ*: Իսկ անգլոամերիկյան մշակույթը կրողներին տրվել է հետևյալ 21 բառերը ներառող հարցաթերթիկ՝ *young, old, child, aged, adolescnct, grown-up, juvenile, adult, girl, boy, infant, junior, senior, toddler, newborn, middle-aged, long-lived, age, little, elderly, baby*: Երկու լեզուներում էլ առանձնացվել են այն բառերը, որոնք

1. այդ լեզուների ազգային կորպուսներում ունեն ամենաբարձր հաճախականությունը,

2. բառարաններում ամրագրված են կա՛մ որպես մենիմաստ բառեր, կա՛մ դրանց բացատրությունների շարքում տարիքի նշանակությունը տրվում է որպես առաջնային,

3. չեզոք են ոճային տեսակետից,

4. տվյալ իմաստային դաշտի նույնացուցիչներ են:

Հարցմանը մասնակցել է բարձրագույն ուսումնական որևէ հաստատությունում սովորող 18-35 տարեկան հարյուրական կամավոր:

Ստացված արդյունքների վերլուծությունը թույլ տվեց վեր հանել լեզվամշակութային յուրատիպ տարրեր ինչպես հայկական, այնպես էլ անգլոամերիկյան մշակույթները կրող անհատների «տարիք» հասկացության վերաբերյալ պատկերացումների շուրջ:

Հետաքրքրական է, որ արդյունքներն առաջին հայացքից կարելի է բաժանել երկու տեսակի՝ *բառային զուգորդումներ*, որոնք առանձնա՛նում են հակիրճությամբ, և *նկարագրական զուգորդումներ*, որոնք ավելի երկարաշունչ են և ներառում են մանրամասն բացատրություն: Ըստ ռուս լեզվաբան Մ. Կրոնգաուզի՝ հատկանշական է այն փաստը, որ չնայած մարդկային տարատեսակ անհատական զուգորդումների առկայությանը որևէ երևույթի վերաբերյալ՝ գոյություն ունեն նաև **կայուն** զուգորդումներ՝ կապված նույն երևույթի հետ: Հենց վերջիններս էլ

² Ст'у Фомина Ж. В. Сравнительные характеристики в понятийно-вербальном сознании носителей русской и американской молодежных лингвокультур. Типы дефиниций // Lingua mobilis, М., 2014, № 5 (51), էջ 51:

թույլ են տալիս վեր հանել լեզվամշակութային առանձնահատկությունները: Դրանք կարող են հիմնված լինել կա՛մ իմաստային կայուն հարաբերությունների, կա՛մ իմաստային դաշտում առկա միավորների կողմնակի՝ դաշտից դուրս գտնվող հարաբերությունների վրա³:

Ստացված բոլոր արդյունքները լեզվաբանն առաջարկում է բաշխել հետևյալ հինգ տեսակների միջև՝

- 1. իմաստային հարաբերությունների վրա հիմնված զուգորդումներ,**
- 2. հիմնատիպերի վրա հիմնված զուգորդումներ,**
- 3. սոցիալական կարծրատիպերի վրա հիմնված զուգորդումներ,**
- 4. ժամանակագրական զուգորդումներ,**
- 5. փոխաբերական զուգորդումներ⁴:**

Հարկ է նշել, որ ըստ մեր վերլուծությունների՝ որոշ պատասխաններ միևնույն ժամանակ կարող են պատկանել այս տեսակներից մի քանիսին:

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվել *բառային զուգորդումների* ուսումնասիրությանը, քանի որ դրանք ամբողջությամբ կարելի է ներառել Մ. Կրոնգաուզի առաջարկած կայուն զուգորդումների ցանկում, իսկ նկարագրական զուգորդումներն ինքնատիպ են, քանի որ նշված ցանկից դուրս են:

Իմաստային հարաբերությունների վրա հիմնված զուգորդումներ:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հայկական լեզվամշակույթը կրողների համար զուգորդումների այս տեսակը տոկոսային հարաբերությամբ (19,8 % կամ 218 օրինակ) ամենածավալուն խմբերից է, ինչը չի կարելի ասել անգլոամերիկյան լեզվամշակույթը կրողների համար (12,8 % կամ 135 օրինակ): Դրանցում առանձնացվել են իմաստային հարաբերությունների հետևյալ տեսակները՝

- *հոմանիշություն,*
- *համատեղելիություն,*
- *հականիշություն,*
- *ժխտում⁵:*

Հայկական մշակույթում հոմանշային զուգորդումները բավականին հաճախադեպ են՝ 180 օրինակ՝

աղջիկ-օրիորդ,
տղա-որդի, երիտասարդ,
տարեց-մեծահասակ, հասուն, ծեր,
հասակակից-տարեկից և այլն:

Անգլոամերիկյան մշակույթում ևս զուգորդման հոմանշային տարբերակները քիչ չեն՝ 113 օրինակ՝

Old-aged, senior,

³ Տե՛ս **Кронгауз М. А.** Семантика, Учебник для вузов, Рос. Гос. Гуманит. ун -т. 2001, էջ 182:

⁴ Տե՛ս նույն տեղը:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 183:

Boy-guy, male,
Adult-grown-up,
Baby-kid, newborn, infant և այլն:

Իմաստային *համատեղելիությունը* բառի կարողությունն է՝ միավորվելու մեկ ընդհանուր իմաստ ունեցող բառերի մի ամբողջ դասի հետ: Այն ենթադրում է իրար չհակասող իմաստների համադրություն: Իմաստային համատեղելիությունը չի ենթադրում բացարձակ և «խիստ» կանոնների կիրառություն⁶: Այս պարագայում շատ բան կախված է ոչ միայն բառի իմաստային առանձնահատկություններից, այլև դրա գործածման հատուկ պայմաններից և նպատակներից: Միայն որոշակի համատեքստի ուսումնասիրությունը կարող է բացատրել իմաստային այս կամ այն համատեղելիության կիրառման պատշաճությունը: Անգլոամերիկյան նյութում այսպիսի օրինակներն ավելի հաճախադեպ են (*young child, old family, aged person, pretty girl, crazy boy, sweet infant, vulnerable toddler, cute newborn, little newborn, small baby*), քան հայերենում (*հեղ աղջիկ, գեղեցիկ աղջիկ, չափահաս տղամարդ, ավագ ընկեր, երիտասարդ ընտանիք, ծեր մարդ, փոքր երեխա, նորածին երեխա, դեռահաս աղջիկ, միջահասակ կին, սեփական երեխա, մեծ երկրագունդ, կրտսեր քույրիկ, փոքրահասակ երեխա*): Նշենք, որ համատեղելիության օրինակներից շատերը դիտվում են որպես հոմանշային շարք, օրինակ՝ *փոքր երեխա* բառակապակցության միավորները կարելի է դիտարկել նաև որպես հոմանիշներ՝ *փոքր-երեխա*, այլ օրինակներ՝ *նորածին-երեխա/նորածին-երեխա, պատանի տղա/պատանի-տղա, young child/young-child, newborn baby/newborn-baby* և այլն:

Ուսումնասիրված նյութում հականիշության հարաբերությունը բավականին համեստ տեղ է զբաղեցնում: Հայկական մշակույթը կրողների պատասխաններում հականիշությունը հանդիպել է 5 անգամ՝ *կրտսեր-ավագ, մեծ-փոքր, անչափահաս-չափահաս, ավագ-կրտսեր, փոքր-մեծ*, իսկ անգլերենում տրվել է հականիշության 4 օրինակ՝ *young-old, little-tall, big-small, old-young*:

Ժխտումը կատարվում է ոչ/not ժխտական մասնիկի միջոցով: Հայերենում հանդիպել ենք այսպիսի օրինակների ընդամենը 13 կիրառություն՝ *տարեց-ոչ երիտասարդ, կրտսեր-ոչ փոքր երեխա, երեխա-ոչ կայուն մտածելակերպ, միջահասակ-ոչ շատ բարձրահասակ, ոչ երիտասարդ և ոչ ծեր, անչափահաս-ոչ մեծ* և այլն: Անգլերենում ևս այս տիպի հարաբերության միավորները հազվադեպ են (ընդամենը 8 օրինակ)՝ *young-not yet an adult, not yet reaching maturity, adult-not a kid but not a child, toddler-not a baby but not a child, child-not yet fully grown, girl, boy-not fully developed, not mature, juvenile-not yet an adult, not ready for the real world, junior-not the first*:

⁶ Ст' у Ахманова О. С. Словарь лингвистических терминов. М.: "КомКнига", 2007, էջ 454:

Հարկ է նշել, որ իմաստային հարաբերությունների վրա հիմնված գուգորդումները բնորոշում են մարդու գուգորդային-խոսքային մտածելակերպը: Դրանք չեն վկայում լեզվամշակութային առանձնահատկությունների մասին՝ ի տարբերություն հիմնատիպային, սոցիալական, ժամանակագրական և փոխաբերական գուգորդումների, որոնք մշակութային տեսանկյունից նշույթավորված են:

Հիմնատիպերի վրա հիմնված գուգորդումներ: Աշխարհում ամեն ինչ՝ և՛ նյութականը, և՛ վերացականը, դասակարգվում և կարգայնացվում է մարդու կողմից: Ստացված պատկերներն անվանվում են հիմնատիպեր, եթե դրանց միջոցով անհատն ընկալում է իրականությունը: Հիմնատիպերը ծնվում են մարդու՝ շրջակա աշխարհի հետ փոխազդեցության շնորհիվ: Կարգի որևէ անդամ, որն ավելի մոտ է գտնվում այդ պատկերին, բնութագրվում է որպես ավելի հիմնատիպային, քան նույն կարգի մյուս անդամները⁷:

Մեր հարցումներով ստացված նյութը թույլ է տալիս հիմնատիպային գուգորդումները բաժանել երկու տեսակի՝ **նյութական գուգորդումներ** (հիմնված ընտանեկան հարաբերությունների և սեփական «ես»-ի վրա) և **վերացական գուգորդումներ** (հիմնված արտաքին, ֆիզիկական և մի շարք այլ հատկանիշների վրա):

Հետաքրքրական է, որ անգլոամերիկյան լեզվամշակույթում ընտանեկան հարաբերությունների և սեփական «ես»-ի վրա հիմնված նյութական գուգորդումների ընդամենը երեք օրինակ է հանդիպել՝ **elderly-my grandmother, baby-my cousin, little-Stuart Little**, իսկ հայկական մշակույթում դրանց թիվը 18 է: Այդպիսի օրինակներ են՝ **երեխաքրոջս տղան, իմ երեխաները, նորածին-եղբորս տղան, երկարակյաց-իմ տատիկը, աղջիկ-ես, տղա-Ռաֆայել, անչափահաս-թոռնիկս, երիտասարդ-իմ երիտասարդությունը, միջահասակ-ես, ծեր-տատիկս ու պապիկս, փոքրահասակ-Լևոն, հասակակից-իմ տարիքի մարդ** և այլն: Այսպիսի օրինակները մեկ անգամ ևս վկայում են այն մասին, որ հայ ազգը մեծ նշանակություն է տալիս բարեկամական կապերին և բավականին եսակենտրոն է այս հարցում, քանի որ գրեթե բոլոր պատասխաններում առկա են «իմ» և «ես» դերանունները կամ «ս» ստացական հոդը: Հայկական կենցաղում այս երևույթն ունի լայն կիրառություն, քանի որ երբեմն նույնիսկ անձանոթներին հայերը դիմում են, օրինակ՝ «հայր», «մայր», «մորաքույր», «հորեղբայր», «քեռի», «եղբայր» կամ «քույր» բառերով: Այս երևույթը անգլոամերիկյան մշակույթին գրեթե բնորոշ չէ, ինչը ցույց տվեցին ոչ միայն հարցման արդյունքները, որտեղ գրեթե բացակայում են բարեկամական կապեր անվանող պատասխանները, այլև լեզվակիրների հետ բազմաթիվ զրույցները, երբ նրանք փաստում էին, որ թեև դիմելիս ժամանակին ավանդաբար գործածվում

⁷ Տե՛ս **Фомина Ж. В.**, նշվ. աշխ., էջ 56:

Էին "aunt" կամ "uncle" բառերը, այժմ այս երևույթն իրենց համար հնացած է: Ներկայումս անգլիացի կամ ամերիկացի երիտասարդները դիմելիս միշտ օգտագործում են կա՛մ ուղղակի անուններ, կա՛մ անգլերեն *Mr. (պարոն) և Mrs. (տիկին)* բառերը:

Մարդկային մի շարք հատկանիշների վրա հիմնված *վերացական գուգորդումները* հարցման երկու տարբերակներում էլ ամենախիտ ու բազմազան խմբերից են: Հայերենի լեզվանյութում դրանք 19,2 % են՝ 212 օրինակ

Աղջիկ-համեստություն, խելացիություն, հմայք, նրբություն, գեղեցկություն, քնքշություն և այլն:

Տղա-քաջություն, ջենտլմենություն, ուժ, տղամարդկություն, պատասխանատվություն, հասունություն, կոկիկություն և այլն:

Չափահաս-հասուն, ուժեղ, խելացիություն, պատասխանատվություն և այլն:

Մվագ-իշխող, հասուն, փորձառու, պատասխանատու և այլն:

Երեխա-հետաքրքրասիրություն, մաքրություն, միամտություն, ուրախություն և այլն:

Մեծ-հասուն, հարգանք, գիտակցում, խրատասաց և այլն:

Ղեռախաս-ինքնավստահություն, անհոգություն, անփորձություն և այլն:

Երկարակյաց-առողջ, պինդ, անմահ, երջանիկ, դիմացկուն, առողջություն և այլն:

Մեծահասակ-գեղեցկություն, իմաստուն, հետաքրքիր, խիստ և այլն:

Անգլերենի համապատասխան խումբը 21,9 % է՝ 230 օրինակ՝

Young-agile, energetic, carefree, active, free և այլն:

Old-experienced, wise, slow, lonely, melancholic, timeless և այլն:

Adolescent-reckless, moody, hormonal, stupidness, cuteness, rebellious, confused և այլն:

Juvenile-immature, boisterous, misunderstood, delinquent, moving, happy, funny և այլն:

Adult-responsible, pornography, caring, mature, developed և այլն:

Infant-playful, cute, innocent, naïve, lovely, sweet, annoying և այլն:

Junior-learning, growing, exploring, little, running, fresh և այլն:

Elderly-grey, experience, fragile, wise, mature և այլն:

Այսպիսի օրինակները՝ դուրս բերված երկու լեզվամշակույթների ներկայացուցիչների հարցման արդյունքներից, խոսուն վկան են այն փաստի, որ «տարիք» հասկացությունն ընդհանրապես մարդկանց մեջ նախևառաջ արթնացնում է ոչ թե կոնկրետ իրի կամ անձնավորության պատկերացում, այլ մարդկային մի շարք հատկանիշների ամբողջություն: Այսինքն՝ անհատը, կիրառելով տարիքի իմաստ արտահայտող բառերից յուրաքանչյուրը, ունի գիտելիք ֆիզիկական, արտաքին, ներքին և մարդկային մի շարք հատկանիշների մասին, որոնք գուցե մի

փոքր տարբերվեն համատեքստից համատեքստ, սակայն դրանց կորիզն ընդհանուր առմամբ նույնն է:

Սոցիալական կարծրատիպերի վրա հիմնված զուգորդումներ: Անձն իր կյանքի և գործունեության ընթացքում կատարում է սոցիալական բազմաթիվ դերեր, որոնց օգնությամբ նա գրավում է որոշակի դիրք հասարակական և միջանձնային հարաբերություններում: Սոցիալական իրադրության փոփոխությանը զուգահեռ՝ փոխվում է նաև մարդու սոցիալական դերը՝ ղեկավար, ծնող, այցելու, ընկեր և այլն: Հետևաբար, սոցիալական դերը մարդու հասարակության կողմից մշակված գործողություններն են որոշակի սոցիալական իրադրություններում⁸:

Արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ սոցիալական կարծրատիպերի վրա հիմնված զուգորդումները հայկական լեզվամշակույթում մի փոքր ավելի հաճախադեպ են, քան անգլերենում (հայերեն՝ 39 օրինակ՝ 3,5%, անգլերեն՝ 26 օրինակ՝ 2,4%): Հայերենի այդպիսի օրինակներ են՝ *կրտսեր-քույրիկ, ընկեր, մեծ-ծնող, աղջիկ-ջուր քերող, տղա-ժառանգ, զինվոր, տարեց-վարորդ, միջահասակ-ասպիրանտ, պատանի-դպրոցական, մեծ-ուսուցիչ, պաշտպան, ավագ-ղեկավար, չափահաս-հայր, հասակակից-ընկերուհի, դասարանցի, կուրսեցի* և այլն, իսկ անգլերենում՝ *middle-aged-father, dad, grandmother, long-lived-grandma, adult-parent, girl-friend, junior-in high school, elderly-pensioners, grandma, parent* և այլն: Այս օրինակները պայմանավորված են տվյալ ազգի մտածելակերպով, կենցաղով և իհարկե մշակույթով: Օրինակ՝ *աղջիկ-ջուր քերող* բառազույգը գուցե տարօրինակ հնչի անգլիացու կամ ամերիկացու համար, սակայն հայերի մեջ ընդունված է, որ աղջիկն ավելի սրտակից է ծնողներին և նրանց ավելի մտերիմ: Անգլերենի *junior-in high school* բառազույգն էլ իր հերթին տարօրինակ կհնչի հայերի համար, քանի որ հայկական մշակույթում *կրտսեր* չի նշանակում *դպրոցական*: Իսկ հայերենի *չափահաս* և անգլերենի *adult* գոյականները համընկնում են իրենց բացատրություններով. երկու լեզուներում էլ բառը զուգորդվել է *ծնող* բառի հետ:

Ժամանակագրական զուգորդումներ: Զուգորդումների սույն խումբը հիմնված է ժամանակի ընկալման և դրա չափման վրա: Տարիքը համարվում է ժամանակային կարգ, որը բնութագրվում է մարդու ֆիզիկական զարգացման փուլերով կամ նրա ապրած տարիների քանակով: Հետևաբար, այս տիպի զուգորդումները հայերենում ներկայացվում են կա՛մ միայն թվերով, կա՛մ որևէ *թվանշան* և *տարեկան* բառերի համատեղ կիրառությամբ, իսկ անգլերենում՝ միայն թվերով կամ որևէ *թվանշան* և *over, below, years old* արտահայտություններով: Հայերենում դրանք 23-ն են (2%), օրինակ՝ *երեխա-0-14 տարեկան, երիտասարդ-18-26 տարեկան, ծեր-80-ն անց, տարեց-60-70 տարեկան, դեռահաս-14-17*

⁸ Տե՛ս <http://doctors.am/hy/personality-and-psychics/socialization-and-identity>

տարեկան, **երկարակյաց-107** և *անց*, իսկ անգլերենում՝ 29 (2,7 %)՝ *adult-over 18, toddler-2 years old, 3, middle-aged-ages 40-60, 35-55, 50, junior-1950s, between 3-12, young-below 15, aged-40s, adolescent-14-18 years old* և այլն: Չուգորդումների այս տեսակը բավականին հայեցակարգային է, քանի որ աշխարհում մի շարք հասկացություններ հնարավոր չէ նկարագրել թվերի միջոցով: «Տարիք» հասկացությունն ունի ժամանակային սանդղակի կառուցվածք, որի վրա այս կամ այն նիշին համապատասխանում է տարիքային կոնկրետ փուլ: Վերջինս հեշտությամբ կարելի է արտահայտել թվերով:

Փոխաբերական զուգորդումներ: Այս խմբի հիմքում ընկած է փոխաբերության կիրառությունը: Հայկական լեզվամշակույթը կրողների 9,6 %-ն է (106 օրինակ) կիրառել փոխաբերական զուգորդումներ տրված միավորների համար, օրինակ՝ *աղջիկ-զգեստ, տղա-մեքենա, չափահաս-անձնագիր, անչափահաս-բշտիկներ, երեխա-մաքրություն, սրբություն, արև, կյանք, երիտասարդ-թարմություն, պատանի-շրջապատ, տարիք-թիվ, չափ, երածշտություն* և այլն: Իսկ անգլոամերիկյան լեզվամշակույթը կրողներն այս հնարը կիրառել են ավելի հազվադեպ՝ ընդամենը 6,6 % (70 օրինակ)՝ *young-fresh, old-timeless, knowledge, aged-death, vintage, wine, cheese, adolescent-rebel, grown-up-jobs, juvenile-delinquent, gangs, boy-cars, sports, girl-pink, age-wisdom, year, number, decade* և այլն: Փոխաբերական զուգորդումները բավականին անհատական են, թեև այստեղ կարող ենք նկատել համընկնումներ երկու լեզուներում, օրինակ՝ *տղա-մեքենա/boy-cars, երիտասարդ-թարմություն/young-fresh, ծեր-մահ/aged-death, տարիք-թիվ/age-number* և այլն: Այստեղ հետաքրքրական են *տարիք* և *age* բառերի համար երկու լեզվամշակույթների տված մեկնաբանությունները: Երկու դեպքում էլ բառերի մի շարք մեկնաբանությունների շարքում գերակշռում են *ծերություն, կյանքի փորձ, հասունություն, old, grown* գոյականները: Սա վկայում է լեզվամշակույթների, մարդկային մտածելակերպի տարբեր տիպերի որոշակի ընդհանրության մասին: Այսինքն՝ կարող ենք փաստել, որ մեր ուսումնասիրած մշակույթներում տարիքը չեզոք հասկացություն չէ, ինչպես այն բացատրվում է բառարաններում (*կյանքի տարիներ, ապրած տարիներ, հասակ, the length of time that a person has lived or a thing has existed*). այն մարդու մտքում ենթազիտակցորեն արթնացնում է ծեր, հասուն մարդու կերպարը: Միգուցե այս երևույթը կարելի է բացատրել լեզուներում *տարիքոտ* և *aged* բառերի առկայությամբ, որոնց բառարանային բացատրություններն են՝ *բավական մեծ տարիք ունեցող, հասակն առած, having lived for a long time; no longer young*:

Ամփոփելով կայուն զուգորդումների ուսումնասիրությունը հայերենի և անգլերենի «տարիք» իմաստային դաշտում՝ կարող ենք նշել լեզվամշակութային հետևյալ առանձնահատկությունները.

- հայկական մշակույթում առանձնահատուկ տեղ է տրվում բա-

րեկամական կապերին, ինչն իր դրսևորումն է գտել տարիք արտահայտող միավորների բացատրություններում: Այս երևույթը բնորոշ չէ անգլոամերիկյան մշակույթին, որը բացատրվում է այն փաստով, որ վերջինիս կրողները ցանկացած իրավիճակում նախընտրում են հավասարազոր հարաբերություններ: Հայկական մշակույթում այս երևույթն այնքան էլ ընդունված չէ. հայերը դիմելիս մշտապես կիրառում են դիմացինի տարիքը մատնանշող միավորներ՝ փորձելով լինել ավելի հարգալից, ցույց տալով իրենց տարիքային կամ դիրքի տարբերությունները.

- հայկական մշակույթը կրողներն ավելի եսակենտրոն են. նկարագրություններում որպես հիմք մեծ մասամբ ընդունում են իրենք իրենց: Իսկ անգլոամերիկյան մշակույթի ներկայացուցիչներն այս հարցում ավելի ընդհանրական են, քանի որ նրանց նկարագրությունների կենտրոնն աշխարհն է,

- և՛ հայկական, և՛ անգլոամերիկյան մշակույթում տարիքը նախևառաջ արտահայտվում է մարդկային մի շարք հատկանիշների ամբողջությամբ և շատ հաճախ զուգորդվում է թվերի հետ,

- հայերենի և անգլերենի «տարիք» իմաստային դաշտի ավելի ընդհանրական միավորները, ինչպես օրինակ՝ *տղա/boy, աղջիկ/girl, երիտասարդ/young, ծեր/old, տարիք/age* բառերը, համընկնում են իրենց փոխաբերական նկարագրություններով: Այս փաստը համաշխարհայնացման (գլոբալիզացիայի) խոսուն վկան է, ինչի հետևանքով սովորաբար կորչում են մշակութային առանձնահատկությունները,

- և՛ հայկական, և՛ անգլոամերիկյան լեզվամշակույթներում տարիքը չեզոք հասկացություն չէ, ինչպես այն բացատրվում է բառարաններում (*կյանքի տարիներ, ապրած տարիներ, հասակ, the length of time that a person has lived or a thing has existed*), քանի որ պատասխաններում այս միավորներին տրվել են *ծերություն, կյանքի փորձ, հասունություն, old, grown* մեկնաբանությունները: Այս փաստը վկայում է լեզվամշակույթների, մարդկային մտածելակերպի տարբեր տիպերի որոշակի ընդհանրության մասին:

Այսպիսի համեմատական ուսումնասիրությունը ևս մեկ անգամ փաստում է մշակույթի, լեզվի և լեզվամտածողության տեսանելի փոխազդեցությունը:

Բանալի բառեր – *լեզվամշակույթ, «տարիք» իմաստային դաշտ, կայուն զուգորդումներ, իմաստային հարաբերությունների վրա հիմնված զուգորդումներ, երկրորդային հարաբերությունների վրա հիմնված զուգորդումներ*

МАРИАМ АДАМЯН – *Стабильные ассоциации в семантическом поле «возраст» армянского и английского языков.* – Исследование лингвокультурного концепта «возраст» – актуальная тема в армянском и английском языках. Актуальность проблемы объясняется повышенным интересом учёных к развивающейся науке лингвокультурологии. В статье проводится сравнительный ана-

лиз концептосфер «возраст» в армянской и английской лингвокультурах. Существуют разные способы выявить специфику образов сознания носителей той или иной культуры. Языковое сознание анализируется сквозь призму системы ассоциаций. Одним из эффективных методов анализа считается свободный ассоциативный эксперимент. В различных культурах ассоциации разнообразны, но они стереотипны для каждой культуры.

Ключевые слова: лингвокультура, концептосфера «возраст», стабильный набор ассоциаций, реакции, основанные на семантических отношениях, реакции, основанные на периферийных компонентах

MARIAM ADAMYAN – *Linguistic Manifestations of Stable Associations in the Semantic Field "Age" (on the material of the Armenian and English languages)*. – The study of the linguocultural concept of "age" in Armenian and English is a subject of current interest. The urgency of this problem can be explained by the increasing interest of linguists towards the developing science of linguoculture. The article provides a comparative analysis of the semantic field "age" in Armenian and English linguocultures. There are different ways to identify the specificity of consciousness of the representatives belonging to a particular culture. Language consciousness is analyzed through the system of associations. One of the effective methods is considered to be the free associative experiment. Associations may vary from culture to culture, but each culture has its own stereotypical associations.

Key words: linguoculture, conceptual sphere "age", stable set of associations, reactions based on semantic relations, reactions based on peripheral components

Ներկայացվել է՝ 12.05.2019

Գրախոսվել է՝ 22.05.2019

Ընդունվել է տպագրության՝ 28.06.2019